



Ք Ա Ր Ո Զ

ՄԻԱՅԱՆ

ԱՄԱՆՈՐ ԵՎ. Ս. ՇԵՍԻԿՆԴ.

(Խոսված 1953 թվականի ամանորի և Ս. Շեսիկան
տոների առքիվ, էջմիածնի Մայր Տաճարում)

«Եկայի երբիցուք մինչև ցթերդեմն»:
ՂՈՒԿԱՍ, թ 15:

մ հավատացյալ եղբայրներ և
քուրեր.

Ամանորի և Սուրբ Ծննդյան
կրթնակ տոների առիթով, Մայր
Տաճարի այս պատմական կամարների տակ,
հանուն ազգին Մրրազնագույն Հայրապետի,
շնորհավորում եմ Ձեր նոր տարին և Սուրբ
Ծննդյան տոնը:

Նոր տարի է. նոր տարի և նոր կյանք է
սփռվել աշխարհի և մարդկության համար:
Երկրագնդի բոլոր ժողովությունները, հարա-
վային շերմ արևի տակ թե հյուսիսի ցըր-
տաշունչ թևեռում, տամեն տեղ, սրտի ան-
հուն բերկրանքով և վաղվա նկատմամբ
բոցավառ հույսերով են դիմավորում նոր
տարին:

Բոլորս էլ հավաքվել ենք ամանորի ա-
վանդական սեղանների շուրջ, ճանապար-
հելու մեռնող տարին, որը իր հետ տանում
է շատ թանկագին բան մեր կյանքից, մեր
երիտասարդությունից, մեր երազներից:
Ի՞նչ է կյանքը. «Մարդոյ որպէս խոտոյ են
տուրք իւրա, — սովորեցնում է Ս. Գիրքը:

Ի՞մ հավատացյալ եղբայրներ և քուրեր.
Համարն ու շատ սիրելի սովորություն է
Եղել այս հանդիսավոր օրերին, հին մեռնող
տարվա և նոր ծնող տարվա արանքում
խորհրդածել, ամփոփվել, գեթ մեկ անդամ
հետադարձ ակնարկ ձգել անցած մեր կյան-
քի օրերի վրա. և նոր հույսերով, նոր ե-
րազներով դիմավորել նորը:

Ժողովուրդների իմաստությունը հին, մեռ-
նող տարին պատկերել է ծերունու կեր-
պարանքով, իր դարս ապրած մարդու կեր-
պարանքով, որն իր տեղը զիշում է ուժեղ,
խոստմնալից երիտասարդի կերպարանքով
ներկայացող նոր տարվան:

1953 թվականն է արդեն. կանգնել ենք
նոր կյանքի, նոր գործունեության, նոր հնա-
րավորությունների առաջ:

Կյանքի մատյանում մի նոր, սպիտակ էջ
էլ ավելացավ. Հարկ է այն լցնել բովան-
դականից և արժանավոր գործերով, հայրե-
նասեր ու եկեղեցաշեն ձեռնարկումներով:

Պատմության գիրքն անցավ 1952 թվա-
կանը:

Հավիտանականության, ժամանակի առաջ
ունիչ է այդ մի տարին: Հազարավոր տարի-
ներն անգամ բովեների տևողություն ունեն
Աստուծո համար: Կյանքը իր հավերժական
զարգացման, փոփոխման ընթացքում, իր
հավիտենական լինելության մեջ ընթանում
է այնքան արագ, որքան մարդկային միտ-
րը:

Այդ կարճ 1952 թվականն էլ, սակայն,
իզուր շանցավ մարդկային պատմության
մեջ:

Անցնող 1952 թվականի մեծագույն բա-
րիքներից մեկը մարդկության և աշխարհի
համար՝ դա ժողովուրդների հերոսական,
վճռական պայքարն էր խաղաղության հա-
մար:

Աշխարհի ժողովուրդները, այդ թվում և

Հայ ժողովուրդը, այնքան էլ հանդարտ սրառվ չեն դիմավորում նոր տարին Այսօր կրկնում նոր ամպեր են կուտակվում: Այսօր աշխարհի հոգեկան փոխառություն, հոգեկան բարովական ճշնամամերը՝ բնության, առելության արտահայտման զանազան ձևելերով մեծ շափերի են հասել: Անհանգիստ են ժողովրդական խաղաղասեր և աշխատունակ զանգվածները, և նրանք իրավացի են իրենց հոգեկան անհանգստության մեջ, որովհետև մթության մեջ նոր դավեր են նյութվում ժողովուրդների ազատության, աշխարհում մնայում խաղաղության և մարդկանց միջև համերաշխության, համագործակցության, ժողովուրդների փոխըմբռնման դեմ:

Անցնող տարին պատմության մեջ մտավ առավելապես որպես խաղաղության համար պայքարի միջազգային մեծ իրադարձություններով հարուստ տարի: Ժողովուրդների բուռն ցանկությունն ու աննկուն պայքար՝ հանուն խաղաղության, կանխեց նոր պատերազմների ու արյունահեղության սարսափը: Ժողովուրդներին երկրորդ համաշխարհային պատերազմի հասցրած վերքերը դեռ լիովին չեն ապագինվել, երբ նորից աշխարհի մի մեծ մասում տանկեր ու թնդանոթներ են ձուլում նոր պատերազմի համար, և շտեմանված, հիմանդրագին մոլուցքով նախապատրաստվում են նոր և ավելի ահավոր, անլուր ոճիրների:

«Տէր տեսէ և այց արասցէ» իր ժողովրդին:

Անցնող 1952 թվականը քիչ հաջողություններ շի բերել ամբողջ աշխարհում խաղաղության մեծ գործին, ժողովուրդների եղացական համագործակցության վսեմ շանքերին:

«Երանի՝ խաղաղաբարաց, զի նոքա որդիք Աստուծոյ կոչեսցին»:

Այսօր երկրագնդի բոլոր մասերում հարյուր միլիոնավոր մարդկանց ուշադրությունը սրտատրոփ կենսորնացել է խաղաղության մեծ գործի շուրջ: Նրանք խաղաղություն են պահանջում աշխարհի, մարդկության համար, իրենց և իրենց զավակների, թոռների ու ծոռների համար: Ամանորի և Սուրբ Ծննդյան այս տոնական օրերին, որքան խրամառություն ու մեռական, պայծառ է զննում ժողովուրդների խաղաղության անփորտակելի կամքի արտահայտությունը. «Բավական է ավերել քաղաքաներն ու երկրները, բավական է մահարեր զենք կուտակել, բավական է ատելություն քարոզել և պատերազմների կոչ անել»:

Տարբեր քաղաքական հայացքների և կրոնական համոզմունքների տեր միլիոնավոր մարդիկ միավագած են այսօր՝ 1953 թվա-

կանի նորածակ շնմքին բնդանուր խաղաղությունը պաշտպանելու սրբազն և աղնիվ գաղափարով:

«Զայն բազմաց ձայն Աստուծուց: Ժողովուրդները իրենց սեփական կյանքով և արյունով պատրաստ են բնդմիշտ փակելու պատերազմների արյունուածանապարհը: Ահա՝ թի ինչու աշխարհի բոլոր ժողովուրդները, այդ թվում և հայ ժողովուրդը, իրենց հայացքները սեկենել են խաղաղության համար պայքարող ազնիվ մարդկանց կողմը: Խաղաղությունը կհաղթի՝ պատերազմին:

Մենոնդ տարվա հետ պետք է մահանանու շքանան նոր պատերազմի բոլոր փորձերը:

Համատեղ շանքերով պետք է աշխատել շեղոքացնելու աշխարհուու ուսմի քաղաքականությունը, և հոչակելու արդարության, իրավունքի, ժողովուրդների իրավագահավասարության քաղաքականությունը:

«Պառակ արդարութեան խաղաղութիամբ սերմանի այնոցիկ, որ առնեն զիազաղութիւն (Հակոբ առաք., Ընդհանրագան թուղթ, Գ. 18):

Խաղաղության երգը շրթներին՝ նոր հույզերով է դիմավորում նաև հայ ժողովուրդը թի՝ Հայրենիքում և թի՝ Սփյուռքում նոր տարին և Քրիստոսի հրաշափառ Ծննդյան տոնը:

1952 թվականը հայ ժողովրդի կյանքում նշանակալից պատմական թվականներից մեկը հանդիսացավ. նո՞ր հաջողությունների, նո՞ր նվաճումների, խաղաղ ու ստեղծագործ աշխատանքի տարի:

1952 թվականի ընթացքում համար պայքարով ձեռք բերված մեր ժողովրդի նվաճումները էլ ավելի ամրապնդել են մեր երկրի, մեր Հայրենիքի հզորությունը, և պահովել են ավելի կուլտուրական, բարձր կյանք ու բարօրություն մեր ժողովրդի համար:

Հայ ժողովուրդը իր Հայրենիքում, իր հարազատ երկրի քաղաքացու բարձր գիտակցությամբ, ազգային հպարտությամբ է դիմավորում նոր տարին:

Անցած 1952 թվականը մեր ժողովրդին նորանոր հաջողություններ բերեց գիտության, կուլտուրայի, արվեստի, արյունաբերության և այլ բնագավառներում: Մեր ժողովուրդը պնդած 1952 թվականին մի փառավոր էց ևս ավելացրեց իր հերոսական պատմության վրա, աշխատանքի, խաղաղ ստեղծագործության, ժողովրդական տնտեսության բնագավառներում:

Հայաստանայց Առաքելական Սուրբ Եկեղեցին էլ, մեր հայրենասեր Հայրապետի իմաստուն ղեկավարությամբ, 1952 թվակա-

նին բոլորց հոգեսոր, կրթական վերագրության միջնամքի մի խոստմնալից տարի: Վեհափառ Հայրապետի ամենօրյա հոգածարության և Հայրապետի ամենօրյա հասակ է առհետ Մայր Աթոռի երիտասարդ, խոստմնալից ու շնորհալի հոգեսորականների մի նոր սերունդ, որը պատրաստ է պատվով ու նախանձախորությամբ կատարել իր պարության համար և հանդեպ:

Անցած 1952 թվականը գոյունակությամբ և հայրենափառական հպատակությամբ է լրցնուած հայրենասեր յուրաքանչյուր հայ մարդու սիրություն:

Բարի սերմնացանի նման երգով ու մեծ հոգսով ցանում է մեր ժողովուրդը, Տերը շուր է տալիս ու աճեցնում բերքը «ընդ միոյ երեսուն, ընդ միոյ վաթսուն, և ընդ միոյ հարիկո»:

Քրիստոնեության անցած պատմական ուղին պայծառ լուսարձակի նման լուսավորի և լուսավորում: Է մինչև այժմ էլ առաջավոր մարդկանց պայքարի ուղին հանուն խաղաղության՝ երկրի վրա, և ժողովուրդների միջև համերաշխության և համագործակցության:

Քրիստոնի ծնունդը պատմական մի եղելություն էր մարդկության պատմության մեջ: Այն դարերով ոգեշնչել և զարդարական զինել է մարդկանց ընդեմն բոնության, մեղքի, տպատության իրենց պայքարություն:

Մի օր, Արմելիի հեռավոր ու մոռացված մի անկումում ծագեց «Երեկակն արդարութեան», «Աստղն Յակուրայ»: Իր ժամանակին իր ուղին կորցրած՝ մարդկությունը մեծ բերկրանքով դիմավորեց «Աստղի ծագումը»: Աշխարհը նրա աստղի լուսով անցավ դարերի ճանապարհը: Ո՞ւ քէն ելցէ ինձ իշխան, որ հովուեցէ զժողովուրդն իմ զիսրաբէլ»: Քրիստոնի առաջ դարեր ու պատմական ծննդություն են. ոչանուն Ցիսուաի ամենայն ծունդը կրկնեսցի, երկնաւորաց, երկրատրաց և սանդարամետականաց: Նրա խանճարութի առաջ ամենից առաջ ծննդություն են Հովհիներն ու ապա հին Արմելիի իմաստուն մողերը:

Ի՞մ քրիստոնյա եղբայրներ և քուրեր, երջանիկ մոգերի և բարի հովիմների նման մենք էլ մի պահ մեր մարի թերերով ու հոգու զորությամբ դառնանք 20 դար դեպի ետ, դեպի պատմության խորերը, դեպի թեթեհնեմ, մեր հոգու բուրու հույգերը, մեր սրտի բուրանին մերը մատացանենք մանկացալ Աստուծու: Մարդաթ և ոսկի ոյ ունիմք» մոգերի պես, բայց ունենք հովիմների սրտառուց հավատը, ծննդադիմք մանուն խաղաղության օրորոցի առաջ, ուրում ա-

մենայն գանձք իմաստութեան և գիտութեան ծածկեալ կան:

Եվ գիտե՞ք ի՞նչ սրտառուց պատկեր կպարզվի մեր մահկանացու աշքերի առաջ: Մի նորածինի խանճարութ-օրորոցի վրա, համակ գորով ու զուրուրանք, հոկում է մի շնորհալի կին: Մայր է այդ կիեր. օսորոցը խորհրդանշանն է կյանքի, մայր՝ խորհրդանշանն է կյանքի հավերժության:

Քրիստոսի ծննդյան ողջ նշանակությունը ամփոփվում է այս երկու համեստ, բայց բազմանշանակալից բառերի մեջ՝ մանկության և խաղաղություն. խաղաղություն՝ մանուկներին: Քրիստոնեությունն էր, որ առաջին անգամ բարձրացրեց մանկության խորունկ նշանակությունը և մանուկներին վերցրեց իր պաշտպանության տակ: Հին Հովհաստանում ոչնչացնուած էին թուզը ու տկար մանուկներին: Կայսերական Հասմը, որի օրենսդրության վրա այնքան շանդարձ կուլսատներով են խսում պատմաբանները. անսահման իշխանություն էր տալիս հայրենին իրենց երեխաների նկատմամբ: «Թուզ տուք մանկաւոյդ գալ առ իս, և մի՛ արգելուք զդոսա, զի այդպիսեացդ է արքայութիւն երկնից»:

Քրիստոսի ծննդյան տարեդարձը, ամենից առաջ, տոնն է աշխարհում բոլոր մանուկներին. Թողնրանց անմեղ ու սրտապին երգերը միախառնվեն թեթեհնեմի իրենց մարտիրոս լոկերների օրհնության հետ, որոնք զոհվեցին խաղաղության համար:

Ժողովուրդները միավորված են այսօր ընդհանուր խաղաղությունը պաշտպանելու սրբազն ու ազնիվ զարդարուով, որպեսզի նոր Հերովեսներ չկրկնեն թեթեհնեմի մանկանց կոտորածները, և որպեսզի ամեն տան մեջ իր օրորոցում խաղաղ քնի իր աշքերն առաջին անգամ կյանքին և արմին բաց անող յուրաքանչյուր մանուկ:

Հերովեսներ միշտ էլ պատրաստ են անմեղ մանուկների արյունը թափելու համար, իրենց տիտուր փառասիրությունների և շահերի համար: Պետք է կարել այդ ձեռքերը:

Դեպի խաղաղություն տանող ճանապարհին խոշոր բալ կիմնի մայրերի միասնական, վճռական սրբարը հանուն խաղաղության, ընդում պատերազմի: Պատերազմը ոճիր է ամենից առաջ մանկության գեմ. մանկությունը հույսն ու ապագան է մարդկության: Մայրերը երեխաներ չեն բերում նրանց թնդանոթի միս դարձնելու համար: Պետք է սուբի կանգնեցնել երկրագնդի բուրու անկումներում զոնվող մայրերին՝ հանուն իրենց Կրեխաների կյանքի ապահովության, ապագայի: Պետք է հումկու և մասական հնչի մայրերի ձախը բնութիվ

պատերազմի, որպեսզի մայրերը այլևս երբեք արցունք չթափեն Հռաքելների նման, Հերովդեսի ձեռքով սպանված իրենց անմեղ սրտի հատորների համար:

Քրիստոսի հրաշափառ Ծննդյան տոնը իր «մեծ և սբանչելի խորհրդի» շուրջն է հավաքում մայրերին և նրանց սրտի ծաղիկներին՝ երեխաներին:

Հին աշխարհու, հելլենիստական կուտունայի կենտրոնները՝ Աթենքը, Հռոմը, Անտիոքը, Արեքսանդրիան իրենց ողջ գիտությամբ, հին մշակութով, մատենադարաններով, փիլիսոփայական սիստեմներով շարողացան աշխարհին և մարդկությանը տալ ցանկավի խաղաղությունը, ինչ բերում էր Քրիստոսը. «Զիազաղութիւն զիմ տամ ձեզ, ոչ որպէս աշխարհս տայ, տամ ես ձեզ», Քրիստոնեական խաղաղությունը լոկ պատերազմի վախճանը չէ, այլ ապրված, համերաշխ կյանք, որտեղ մեկի երջանկությունը երջանկություն է մյուսին, որտեղ զերջ է գտել գալլային օրենքը, որտեղ գալլերը ու գառները միասին են ճարագուած:

Ամանորի և Սուրբ Ծննդյան օրերին, մի անգամ ևս աշխարհով մեկ հողակվում են

Քրիստոսի խաղաղության և համերաշխության պատգամները: Պետք է նախ երկրի վրա թագավորի խաղաղությունը, որպեսզի մարդկանց մեջ էլ հաստատվի ցանկալի «հաճությունը»:

Խաղաղության գործը արդար է, որովհետև Քրիստոսի գործն է, պետք է այն պահպանել աշքի լուսի պիս, արհաբար:

Խաղաղությունը գործի է վերածվում մեր օրերին: Այն իր ձեռքն է վերցրել ժողովուրդը, որը դարերով զուրկ է մնացել խաղաղությունից:

Թող 1953 թվականը լինի աշխարհի բոլոր ժողովուրդների և նրանց թվում հայ ժողովրդի համար խաղաղ, շինարար, ստեղծագործ աշխատանքի տարի, ժողովուրդների միջև համաձայնության տարի, խաղաղության վերջանական հաղթանակի տարի, երկրի վրա Աստուծո թագավորության հաստատության տարի:

Աղոթենք սրտափին, որպեսզի զուխցին պատերազմունք, դադարեսցին յարձակմունք թշնամեաց, տնկեսցի սէր և արդարութիւն ի յերկրի», ամեն:

